**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1**
**21.11.2018թ. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ**
**N «ԴԴ-ԷԱԱՊՁԲ-18/01-1» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ք. Երևան «   » «        » 2018թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավար Կ. Փոլադյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մի կողմից, և «Կապիտալ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Լ. Պետրոսյանի, այսուհետ՝ «Վաճառող» մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ կետով նախատեսված պայմանները, և հիմք ընդունելով 21.11.2018թ. կնքված N «ԴԴ-ԷԱԱՊՁԲ-18/01-1» գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.15 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հաշվի առնելով ֆինանսական միջոցների առկայությունը, Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման անհրաժեշտությունը. կողմերը որոշեցին՝

1.1. Պայմանագրի 3-րդ կետը լրացնել 3.2 ենթակետով.

«3.2 Պայմանագրի գինը՝ 32 693 760 (երեսուներկու միլիոն վեց հարյուր իննսուներեք հազար յոթ հարյուր վաթսուն) ՀՀ դրամը, Գնորդը փոխանցում է Վաճառողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:»

1.2. Պայմանագրի 3.3 ենթակետը հաստատել նոր խմբագրությամբ.

«3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի 8.15 կետում նշված համաձայնագրին կից վճարման ժամանակացույցով (հավելված N 1) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 28-ը:»

1.3. Պայմանագրի N 1 հավելված հանդիսացող ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ-ում նշված <<մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:>> բառերը հանել պայմանագրից:

1.4. Պայմանագրի N 2 հավելված հանդիսացող ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N 1-ի:

Digitally signed by POLADYAN KAREN 1911770055
Date: 2018.12.06 15:19:59 AMT

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է 3 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի հավելված N 1-ը հանդիսանում է N 1 համաձայնագրի  անբաժանելի մասը:

### 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

**ԳՆՈՐԴ**
***Դատական դեպարտամենտ***
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5
Հ/Հ՝ 900011192151
ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

Ղեկավար՝ Կ. Փոլադյան

--------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
***«Կապիտալ Քոնսթրաքշն» ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Կոմիտաս 49
Հ/Հ՝ 11500611467800
ՀՎՀՀ՝ 00883186
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ Լ. Պետրոսյան

--------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

Digitally signed by PETROSYAN LUSINE 5809850863
Date: 2018.12.04 19:25:21 GMT+04:00

Հավելված N 1
« 21 »  նոյեմբերի 2018 թ. կնքված
«ԴԴ-ԷԱԱՊՁԲ-18/01-1»  ծածկագրով պայմանագրի
«      »  «                  » 2018թ.  կնքված N 1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|
| **հրավերով նախատեսված չափաբաժնի համարը** | **գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)** | **անվանումը** | **դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | |
| | | | **դեկտեմբեր** | **Ընդամենը** |
| 1 | 30197650/501 | թուղթ՝ օֆսեթային | 32 693 760 | 32 693 760 |

**ԳՆՈՐԴ**
***Դատական դեպարտամենտ***
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5
Հ/Հ՝ 900011192151
ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

Ղեկավար՝ Կ. Փոլադյան

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
***«Կապիտալ Քոնսթրաքշն» ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Կոմիտաս 49
Հ/Հ՝ 11500611467800
ՀՎՀՀ՝ 00883186
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ Լ. Պետրոսյան

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

Digitally signed by
PETROSYAN LUSINE
5809850863
Date: 2018.12.04 19:23:46
GMT+04:00